ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ . 1949, № 3 *Общественные науки*

ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1949 թ. մարտի 31-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանը բաց անելով ժողովն ասաց.

—Ընկերներ։ Հինգերորդ անգամն է, որ մեր Ակադեմիայի իսկական անդամները, թղթակից-անդամները և գիտական աշխատակիցները հավաքվում են՝ Ընդհանուր ժողովում հաշվետվություն լսելու մեր Ակադեմիայի տարեկան գործունեության հիմնական արդյունքների և առաջիկա անելիքների պլանի մասին։

Ակադեմիայի գոյության անցած հինգ տարիների ընթացքում մենք ձեռք ենք բերել դժալի հաջողություններ, կատարել ենք մի շարք աշխատանքներ գիտության տարբեր բնագավառներում։

Միաժամանակ պետք է նշել, որ ձեռք բերված հաջողությունների հետ մեկտեղ ունեցել ենք նաև խոշոր սխալներ ու անհաջողություններ։

Գիտության բնագավառում մեր ձեռք բերած հաջողությունները խոշոր են ու նշանակալից այն բանի շնորհիվ, որ գիտությունը մեզ մոտ զարգանում է սովետական պայմաններում։

Գիտությունը Սովետական Հայաստանում սկիզբ է առել և իր լավագույն տրադիցիաները ժառանգել է ռուս մեծ ժողովրդի գիտությունից։ Հայաստանում ներկայումս զարգացող գիտությունը հանդիսանում է ողջ սովետական գիտության մի անբաժանելի մասը։

Մասնավորապես հարկ է նշել այն խոշոր գերը, որ խաղացել են ռուս ժողովրդի ներկայացուցիչները Հայաստանում գիտական միտքը զարգացնելու գործում։ Այդ գերն է՛լ ավելի ուժեղացավ սովետական ժամանակաշրջանում շնորհիվ այն ամենօրյա օգնության, որ ցույց են տալիս մեզ Սովետական Միության գիտական հիմնարկները և գիտնականները։

Այն ժամանակ, երբ մեզ մոտ, Սովետական Միության մեջ, գիտությունն ապրում է ծաղկման աննախընթաց ժամանակաշրջան, որը օրեցօր աճում են մեր գիտական կադրերը և ուժեղանում են մեր գիտական հիմնարկները, այդ նույն ժամանակ գիտությունն Արևմուտքում ապրում է անկման շրջան, ավելի ու ավելի է իջնում նրա գաղափարական մակարդակը։ Եվ պետք է նկատել, որ այսօր Արևմուտքում կարող է գարգանալ միայն այն գիտությունը, որը կապված է մարդկության ոչնչացման միջոցների հետ, կապված է պատերազմի հետ։ Գիտության այլ ճյուղերն այնտեղ գտնվում են հետին պլանի վրա։ Այնտեղ գիտության տեղ սկսել է ծաղկել կեղծ գիտությունը։ Բավական է ասել, որ ըստ եղած տեղեկությունների՝ ԱՄՆ-ում կա ընդամենը մոտ 4—5 հարյուր աստղագետ, մինչդեռ աստրոլոգների թիվը հասնում է 23 հազարի, որոնք գուշակություններ են անում աստղերի հիման վրա։ Դա փաստ է, որն արձանագրված է մինչև անգամ ամերիկյան մամուլում։

Ահա, այսպիսի անկման շրջան է ապրում գիտությունը Արևմուտքում, այնպիսի մի անկում, որը արտասովոր է եղել նույնիսկ կապիտալիստական աշխարհի համար, եթե նկատի ունենանք կապիտալիստական երկրները 18—19-րդ դարերում։

Հասկանալի է, որ այդպիսի պայմաններում արևմտյան գիտությունը ոչ մի սկզբունքային նշանակություն ունեցող արդյունք չի կարող տալ։

Պարզ է, որ մենք պետք է ուժեղացնենք մեր պայքարը այն ստորաբաշխության դեմ, որը որոշ դեպքերում դեռ դժալ է տալիս իրեն մեր աշխատանքների ընթացքում։ Ստորաբաշխության դեմ պայքարն ուժեղացնելու տեսակետից մեծ աշխատանք կատարվեց 1948 թվի ընթացքում։

Մեր գիտնականներից նրանք, ովքեր չէին հասկանում այդ խնդրի էությունն ու

կարևորությունը, հասկացան, ըմբռնեցին և այդպիսով ազատվեցին մի շարք սխալ տեսակետներից, որոնք խանգարում էին նրանց իրենց գիտական աշխատանքների ընթացքում։

Այսօր, ուրեմն, մենք պետք է ավելի ուժեգացնենք պայքարը ստորաքարշության դեմ, ոչնչացնենք կոսմոպոլիտական հայացքները մեր շարքերում, հայացքներ, որոնք հատուկ են ոչ միայն գրականության ու թատրոնի բնագավառներին, այլև կուլտուրայի և գիտության մի շարք բնագավառների, մասնավորապես՝ մեզ մոտ, մեր ռեսպուբլիկայում։

Ես կարծում եմ, որ մեր գիտնականներն արդեն մեծ փորձ ունեն սկզբունքային խնդիրները լուծելու, իսկ այդ սկզբունքային խնդիրների լուծումը, ճիշտ տեսակետի վրա կանգնելը, մարքսիզմ-լենինիզմի հիման վրա աշխատելը մեծապես կնպաստեն մեր գիտնականներին՝ նրանց բեղմնավոր աշխատանքում։

Ես ցանկանում եմ մեր գիտնականներին նորանոր հաջողություններ, ես ցանկանում եմ, որ մեր գիտնականները, ինչպես միշտ, այս դեպքում էլ կանգնած մնան ճիշտ ճանապարհի վրա, ավելի զարգացնեն ստաջադեմ գիտությունը մեր երկրում, ստալինյան գիտությունը։

Թույլ տվեք, ընկերներ, Ակադեմիայի տարեկան ժողովը՝ նվիրված Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի 1948 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքներին և 1949 թ. գիտա-հետազոտական աշխատանքների պլանի հաստատման, համարել բացված։

Ընկ. Վ. Համբարձումյանի բացման խոսքից հետո Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Գուլքանյանը զեկուցեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի 1948 թ. աշխատանքների հիմնական արդյունքների և 1949 թ. հիմնական խնդիրների մասին։

Զեկուցողը ըստ բաժանմունքների հանգամանորեն կանգ առավ այն պրոբլեմների վրա, որոնց ուսումնասիրությամբ զբաղվեն Ակադեմիայի ինստիտուտները ու սեկտորները 1948 թվականի ընթացքում, թվարկեց այն հաջողությունները, որ ձեռք են բերել տարբեր ինստիտուտներ իրենց հետազոտությունների ընթացքում, և ծանոթացրեց 1949 թվի գիտա-հետազոտական աշխատանքների պլանը, նշելով այն պրոբլեմները, որոնցով զբաղվելու են Ակադեմիայի գիտաշխատակիցները։

Զեկուցողը կանգ առավ նաև մի շարք ինստիտուտների աշխատանքում նկատվող թերությունների վրա (քիմիական, երկրաբանության, գրականության ինստիտուտներ, Արվեստի պատմության և տեսության սեկտոր և այլն)։

Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ ընկ. Վ. Հ. Գուլքանյանի զեկուցման շուրջը բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին՝ Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Ա. Ս. Ղարիբյանը, քիմիական գիտությունների դոկտոր Ա. Լ. Մնջոյանը, բիոլոգիական գիտությունների թեկնածու Թ. Գ. Կատարյանը, Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Լ. Ա. Հովհաննիսյանը, պրոֆ. Հ. Գուսիկյանը։

Ընդհանուր ժողովը՝ լսելով Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցեպրեզիդենտ Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Գուլքանյանի զեկուցումը Ակադեմիայի 1948 թ. գիտա-հետազոտական աշխատանքների արդյունքների և 1949 թ. հիմնական պրոբլեմների մասին, որոշեց՝ հավանություն տալ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի 1948 թ. ընթացքում կատարած աշխատանքների արդյունքներին և հաստատել 1949 թվականի համար նշված հիմնական պրոբլեմները։

Ընդհանուր ժողովը քննարկեց նաև կազմակերպական հարցեր։ Ակադեմիայի ինստիտուտների և հիմնարկների աշխատանքի օպերատիվ զեկավարությունն ուժեղացնելու համար Ընդհանուր ժողովը որոշում ընդունեց ստեղծել քարտուղարություն՝ բաղկացած գլխավոր քարտուղարից և երկու քարտուղարից։